պատուիրեալ թէ պարտ է 'ի սոյն օրինակ գրել հրովարտակաց։ Եւ ապա ըստ հաճութեան նորին Կայսերական կամաց՝ գրեցին զերկուս հրովարտակս, մին Հայոց և միւսն Յունաց, և նկարեալ զթուղթսն արձանագրեցին 'ի Դիւանի անդ, և առաքեցին առ Արքայ (1811· յ2 Յունիսի)։ Զի ձեռամբ իւրով վաւերացուցեալ (Խաթթի Շէրիֆ) դարձուսցէ 'ի Դուռն, տալ անտի զմին Հայոց եւ զերկրորդն Յունաց, և բառնալ 'ի միջոյ զվէճն և զխռովութիւնն։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Ֆրա Մանուէլ Լատին։ Զայրոյթ Յունաց։ Մկրտիչ վարդապետ։ Մեհէմմէտ Ապուլլպութ։ Նաւ ուխտաւորաց։ Հրովարտակք Հայոց եւ Յունաց։ Թարգմանութիւն հրովարտակին Հայոց։

ԻՍԿ Լատին կրօնաւորն Ֆրա Մանուէլ՝ որ 'ի ժամանակէ հետէ դեգերէր 'ի Կոստանդինուպոլիս, վերջապէս յաջողեցաւ առնուլ հրովարտակ յԱրքայէ տիրել դարձեալ սեփհական ժառանգութեանց եւ կատարել զսովորական պաշտամունս իւրեանց 'ի տաճարին Ս· Յարութեան, եւ դիմեալ անտի յԱքքէ և 'ի Դամասկոս՝ էառ 'ի Բդեշխից դիր հաստատուն առ Դատաւորս Երուսաղէմի· եւ ապա եկն եմուտ ընդ Փոխանորդին իւրեանց 'ի Ս· Քաղաքն ('ի 20 Մայիսի)· և զկնի աւուրց ետուն ընթեռնուլ Լատինք զհրովարտակն իւրեանց 'ի դատարանի առաջի մեծամեծաց քաղաքին, ուր էին Թարգմանք և Փոխանորդք Հայոց եւ Յունաց։ Եւ ապա գնացին բազմութեամբ 'ի Ս· Յարութիւն, յանձն արարին Լատինաց զԳերեզմանն Քրիստոսի, հանեալ անտի զԼուսարար նոցին՝ կախեցին զվարագոյրս 'ի ներքս և յարտաքս Գերեզմանին և 'ի սիւնքս, որպէս ունէին զնոսա նախ քան զՀրդէհն· նոյնպէս կախեցին զ5 կանթեղս առաջի Գերեզմանին, յարքունի մեծ կամարէ՝ զորս բարձեալ էին Յոյնք· հաստատեցին զաշտանակս՝ զպատարագն և զայլ հանդէսս՝ զորս կամեցան,